

լիսն: կան նաև բազմաթիւ թրքական խաղը և զրոյցներ, որոնց թէ բառերուն և թէ եղանակներուն հնարիչները եղած են հայեր, սակայն անոնց ճանչցուած են իրեն թրքական հեղինակութիւններ:

Ա. Ա. Ա. Կ.

Հիսոր (Բատու) 1923

ՄՊԱՅԱՆԻ ԶԱՅԱՐՄԱՎԱԼ ԳԱԽԱԾ

(Աշխատքուն - Պատրաստ ռատուակաչը բնիւն)

(Շարութակութիւն տես բազմ. էջ 206)

Բուսականութիւնը. — Զահարմահալը շատ հարուստ է բուսականութեամբ, որին նպաստում է գաւառի արգասաքեր նողը և բարեկեր կլիման: Ամբողջ գաւառը ծածկած է արգաւանի գաւառերով ու հովիտներով, խոտակտ արօտներով ու շամբերով, սիրուն տափաստաններով, կանաչ մարգագետիններով, պոստաններով ու պարտէններով (իւրաքանչիւր գիւղ ունի իր պոստանն ու պարտէզը), որոնք զլիսարապէս զարնան ծածկում են բազմատեսակ բոյսերով ու խոտերով և նպաստում են ոնասնապահութեան ու խանարածութեան ինչ ընդարձակ արտերն ու լինազաշուերը առանձին նպաստում են երկրագործութեան: Այստեղ բուսուում են թէ ցուրտ, թէ շարեխան և թէ ջերմ երկինների սիրուկ հաշուկներն և արդիւնաբերական բյուկը:

Հազարյունքը ու խոտարյունքը. — Արտերում մշակում են հետեւալ ընտիր հացարոյսերն ու արգիւնաբերական բոյսերը, - ցորեն, գարի, հաճար, կորեկ, կտաւանա (որից ձեթ են պատրաստում), շաւզա, հօլլար, եօնչա (մի տարի ցանում են և եօնչ տարի հնձում), նուշի (դառագուում), քիսին (կէվտանա), սոսի, սինեռ, խաշխաչ, շանբիւա, քարի (որից ձեթ են պատրաստում), բուսկան (կրի հետ խառնում են և ծեփում բաղնսի պատերը), և այլն:

Մրգինը ու կանաչինները. — Բանջարանցներում, բաղերում և պարտէններում (բազմաներում) ցանում են վարունգ, շանգեար, քալ (սեխ), ձմեռուկ, գլում, զազար, կաղամբ, բողկ, տակ (ճակնդեղ), լորի, բակլայ, մաշ, բաղրիշան, գետախնձոր, (աննան քանակութեամբ) սոխ,

թթէփ, սամիթ, չաղամար, զօսա (եզիպատացորեն), արևածաղկ, ջրկոտեմ, կոտեմ, սուսամբար (զամբախ), ունան, անանուխ, թալխուն (թարխում), քիչնիգ, և այլն:

Դաշտային բուսականութիւնը (ինքնարդոյ):

— Դաշտային բուսականութիւնը նոն է և բազմազան դաշտերում բննում են սինձ (որից աղցան են պարտաստում, ապա ինող և կաթով տապակում և ուսում), սիբէն (աղցան են պատրաստում), դազ (հաց ու պանիրով ուսում են), բազուկ (անհաց ուսում են), քանգ, թթւաշ (իրեւ թեր զցում են թանապուրի մէջ), խօսնատու (մարգագետինների միջից են գտնում, որը աղցան են շինում, ապա կաթով, ինող և ձևով տապակում են և ուսում), բլբչարուխ (սրա արմաքը, որ կոչուում է ատու, անհաց ուսում են, իսկ տերներից աղցան են պատրաստում), բանջար, ճիրմակ բանջար (աղցան են պատրաստում), բուռուկ (աղցան են պատրաստում), բարալուք (հացով ուսում են), պօպղ (արմատն ուսում են), դիատ, կապոյտ եօնչա, զեղին եօնչա, դասնիչ, խրինուուք, ճիլ (որից պարան են պատրաստում), ճարճառուք, թալխայ, զառնաւիլ, եղաւիլ, քօճակ, կաթնուկ, ջագեան, ջիլ խոռ, սիրիկ, փաթաթուուկ, փիզու, զայլանդամիշ, նարմայ, կօծան, մկան գարի, եզան լեզու, իծու միրումք, ուլի յանզավ, իշու փուշ, ուն փուշ, զարոյ, ուզ, զօմուուք, բարթանք, բիսա, հօռ, ճնճարլիթ (որից հազի համար գեղ են պատրաստում), խաքըջի (տաքութեան համար գեղ են շինում), ուոց (սուկրացակի գեղ են շինում), չիրալի, չալմայ, զինիոն, զայթարան, քաթիջափ, բութայ (որից կալի համար աւել են պատրաստում կամ իբրև վառելիք թուրում զորածում), թօզէան (կրի հետ խառնում են և ծեփում բաղնսի պատերը), և այլն:

Լենային բուսականութիւնը. — Զահարմահալի լենային բուսականութիւնը նոյնպէս բազմազան է: Լեներում բննում են հետեւալ բոյսերը. — միւսիլ (որ մածունի ենտ խառնելով ուսում են. սրան գիղացինները կոչում են թիլիքայ), զօլու (որից կենքը հնեպում են և ուսում), քանգա (աղցան են պատրաստում կամ իբրև վառելիք թուրում զորածում), թօզէան (կրի հետ խառնում կամ իշու պապակում են և ուսում), բալան (աղցան են պատրաստում և թանձ են խառնում կամ իշու պապակում են և ուսում), սունկ (իւղով տապակում են և ուսում), քալավուզ (աղցան են պատրաստում), պօսա (հացով ուսում են կամ ապօրի մէջ ածում), լորօ (անհաց ուսում են), թութ, խալըուծիլ (ծամում են և թթւաշ ջուրը ծծում), բոնցօրի (աղցան են պատրաստում), զուլուփիլ

(զանի մէջ են ածում), բուգեանդի (ոչխարն է ուստում), ժախ (ոյխարի կերպուր է), զասնի, չողան (որի արմատով շոր են լւանում), չիի, Ալբանդ, գօլզարդի, քլովզ, ջաղանա, քետակ, խօշամզայ (սրանք բոլորն ել ոչխարի կերակուրներ են), քամախ (ոչխարը, էշը և ճին են ուստում), գեանդալ (որից դեղին ներկ են պատրաստում), զնոտրայ (ոչխարը, եզը և էշն են ուստում), գէզուլազի, հաւատւայ (որի արմատից վերքի գեն են պատրաստում), զառօվայ, ուստազուուզ (երկսիր էլ զեղ են չինում), կապուտ փուչ, կատիք հաղող, մանդաք, բնուխոս, պէծակափոչ, և այլն:

Պլոտառոց ծառերը. — Զահարմանալը աղքատ է պլոտառոց ծառերի կողմից այգիներում և պարտէններում ածում են տանձնի (թիշ է), խնձորէնի, ծիրանի, զեղձնինի (թիշ է), թթէնի, սալբրէնի, նշնի (թիշ է), նսննի (թիշ է) և խաղողի որթեր:

Վայրի ծառերը. — Վայրի ծառերից յայտնի են ուռի, հացի, բարդի (քերարուա), զագի (սփիթ-դար) սօնաբարի, սխսի, առջին, արօլ, և այլն:

Թիկերը. — Զահարմանալը բաւական հարուստ է թթէնիով, որոնցից նշանաւորներն են գարգունայ, չալու (որից դեղին ներկ են պատրաստում), փաշմակ, գեօլ, ծօվանք, գուու, ամգէ, եավան, մոլմափչա, ջջայ, մկան զազ, իծու զազ, տաղիր զազ (որին այրում են և եզան ու կովի համար կերպուր պատրաստում), կարմիր զազ, և այլն Յիշեալ բոլոր թիկեր գործ են ածում իրեւ վառելիք:

Վայրի ծարիկները. — Զահարմանալի դաշտերն ու սարերը հարուստ են ալուալան ծաղիկներով. յայտնի են՝ կակաչ, մանուչակ, մարեմայ-ծաղիկ, զուլէպան, բարձմանուկ, պառուի շաղիկ, ճնծաղիկ, մինակ, նարկիչ, բաւասան, զարբար, ծծուկ, տուփա, կաթնուկ (որից դեղին ներկ են պատրաստում), և այլն:

Հնատանեները. — Անտառների կողմից Զահարմանալը շատ աղքատ է, բայց գիւղացիներն իրենց գիւղերի առաջ մշակում են զանազան վայրի ծառեր և անկում արհնաւական անտառներ, որոնք սարէց տարի աելի են ընդարձակում: Համարեա բոլոր գիւղերն էլ ունին ձեռատունկ անտառներ, որոնք բացառապէս կազմաւած են բարզի, ուսի, հացի, սօնաբարի, սխսի ծառերը: Այդ ծառերի փայտերը գործածում են գըլխալուապէս տան ծածկի և չշնչերի համար:

Մարզագնուինները. — Զահարմանալում կան մի քանի նշանաւոր մարզագնուիններ, որոնք

անասնապահութեան տեսակէտից նշանակալից կեր են կատարում: Դրանք են 1) Դէֆորդու չանիր, 2) Միկու, 3) Սփիդաշտու, 4) Ակրին և ներթին - Քօնաբրների, 5) Սինականու և 6) Սիրաբու: Սրանցից օգտուում են թէ՛ գիւղացիները և թէ վրանաբնակները:

Ճանիհնեները. — Զահարմանալում կան մի քանի ճանիհներ, որոնք ծածկւած են կանաչով և եղենով: Այդպիսիներից նշանաւոր են. 1) Գեանդումանի շամբը, որի երկարութիւնն սկզբուում է Քեալլար սարի սոորոսից և վերջանում է մինչև Քօփի եզրը. իսկ լայնութիւնն ընկած է Քաթագ պարսկաբնակ գիւղից մինչև Շահուարու դաշտը: Այս շամբը հարուստ է խոզերով, բաղերով և այլ թթչուններով: 2) Ջախուու շամբը, որի երկարութիւնն սկզում է Ջախիուու զալիցն և զգուում է մինչև Ջամբգով պարսկաբնակ գիւղը. իսկ լայնութիւնն սկզում է Գօրգու դաշտից և զգուում է մինչև Թօջալու զամբերը:

Լինիանենեները և բոլունները. — Զահարմանալի լինանենի կինդաբիներն են. Կով, եզ, գոմէշ (շամ թիշ է), ոչխար, այծ, ուզու (թիշ է), էշ, ծի (մատեան), ջորի, շուն (գամբը), կատու: Բնտանի բայուններից պահում են հաւ, արադաղ, աղամի (թիշ է), սագ և բայ (շամ թիշ էն): Գաշտային բայուններից յայտնի են. լոր, ջրի լոր, կաթաւ, ճնճուկ, արտութիկ, արամարգի, բաղ, հավալ, տատրակ, մոշան, և այլն:

Եղուցիկի բայուններից աշքի են ընկնում: Սոխակ (բլուու), գեղձանիկ, կուկու, յոպու, լծի, զողուան, մշանաւ, և այլն: Գարնան Զահարմանալում երեւում են չող բայուններ, որոնք աշխան հնանում են, ինչպէս արագիլ (լակակի), կուռնի, ծիծնանակ, սարեակ, կան նաև զիշակիր բրայլուններ, որոնցից յայտնի են. արծին, բազէ, անգի, աղուս, կաշաղակ, ներկարար, բու (բայ-կու), ցին, ցիլիկ, ձկնկու, ճայ, ուրուր, լեակ, չորթապազու, լաշխու: Այդուններից կ գեռաններից յիշատակուում են. օձ (զանազան սեսակի), մողէս, կրիայ, լոկ, քարաթթուոչ, ինցիցնին, զորո, կարիճ, և այլն: Միջատաներից աշքի են ընկնում: բոռ, ճպուն, բգեզ, պիծակ, թթուու, մարախ, մնուս, սեաճանճ, ձիաճանճ, զատիկ, ականջմուուկ, սարդ, թիթեռնիկ, և այլն: Խեցինորբենից յայտնի են. խխունջ, ծծուուկ (մեծ պատեանով իխունջ) և խեչափաւ: Իսկ ծծմունիքներից կամ որդունքներից կան. որդ (զանազան տեսակի), տղուուկ, թթուու: Զահարմանալի լեռ-

ները լի են և վայրի կենդանիներով, ինչպէս՝ արջ, զայլ, աղէս, քարայծ, սարի այժ, այծեամ, եղջերու, վարազ, նապաստակ (ալապաստրակ), խոզ, չաղալ, ճագար, վայրի կառու, կուզ, խլուրդ, ոզնի, առնչու, սկրու, մուկ և այլն:

Բ.

Աղբաբնակութիւնը. — Բախտիարցիները, — Պարսկեները, — Թօրքերը. — Հայեր և նրանց պազառութիւնը. — Կաղճածեց. — Բնոյթագործիւնը. — Զքաղմանք. — Կրօն. — Եկեղեցին. — Քահանաները. — Գործակալ քահանաները:

Ազգարմանակութիւնը. — Զահարմանալի ազգաբնակութիւնը բաղկացած է չըսու զլխաւոր տարրերից. — Բախտիարցիներից (Լոռերից), Պարսիկներից, Թօրքերից և Հայերից: Մրանցից պարսիկները կազմում են զաւարի ընկի տարրը, իսկ միւսները հեկուներ են: Այժմ սակ նրանց մասին համաստ տեղեկութիւններ:

Բախտիարցիները (Լոռերի). — Լոռեր կազմում են Զահարմանալի ազգաբնակութեան գըլխաւոր մասը, որոնց մեծամասնութեամբ կիսավայրենի կենակը են վարում և կառավարում են իրենց խաներով: Սրանք Զահարմանալում հաստատել են սրանից (1920) 75 տարի առաջ: 1845 թիւն չափ եղբայրներ՝ Հոսէյն Ղուլի խան իլխանի, Մուսթաֆա Ղուլի խան (Հոսէյն խանի օգնականը), իմամ Ղուլի խան իլբէկի և Ռոզա Ղուլի խան (Իմամ խանի օգնականը), իրենց գերգավառաներով և բազմաթիւ ծառաներով Խօրասանից չուում են Զահարմանալ զաւարո և ժամանակի ընթացքում ահազին հարստութիւն ձեռք բերելով՝ զնում են բազմաթիւ գիւղեր և հողեր և հետզետէ տիրանում հն ամբողջ գաւառին: Այժմ նրանց մէջ կան խոշոր կալւածատէրներ:

Սովորաբար Լոռերի ցեղը բաժանւում է երկու զլխաւոր ճիւղի. 1) Խլխանի, որ սերել է Հօսէյն Ղուլի խանից և 2) Խլբէկի, որ ծագել է իմամ Ղուլի խանից: Յիշեալ երկու ցեղերն էլ անւանական կերպով պարսից տէրութեան մասն են կազմում. իրականութեան մէջ նրանք ցեղապետութիւններ կամ փոքր իշխանութիւններ են, խանական կառավարութեամբ: Ընդհանապէս նրանք քաջ ծիրառներ են և լաւ հրացանաձիգ: Ուրիշ որ և է զբաղմունք չունին: Հարստահաւորութիւններ և կեղեցում. — ահա նրանց զործերը:

Դարեր շարունակ ծանրացած են խեղ գիւղացների արգէն յոգնած ուսերի վրայ:

Պարսիկները. — Սրանք գաւառի ընկի տարրն են և իրենց թւով կազմում են ազգաբնակութեան ճնշող մեծամասնութիւնը: Զքալում են գլխաւորապէս հողագործութեամբ, խանարածութեամբ և մասամբ էլ առներով: Կրօնով շխաներ են, վերին աստիճանի մոլեռանդ և նախապաշտաւութեամբ: Հայերի հետ հաց չեն ուսում, նրանց ամանները չեն զործածում, որպէսն հարամ է, ծրած են 84 մեծ և փոքր գիւղերում:

Թօրքերը. — Ընդհանրապէս թափառական վրանաբնակ կենակ են վարում թօրքերը և զքալում իշխարածութեամբ ու տարածութեանը կարում: Սելջուկնեան արշաւանքների ժամանակաշրջանում բաժանում են զանազան մանր ցեղերի, որոնցից նշանաւորներն են. Ղաջայի, Ղարբեցի, Զքարզաղարիք, Արաբբասուրիք, Գեաւալամէյի: Այս ցեղերի մէջ խորվութիւնն անպահան է. յաճախ նրանք միմնանց անխնայօթն կոտրում են:

Ենթերից շատերը գարնան իրենց հօտերով ու խաներով շուշտարուց զալիս են Զահարմանալ, իսկ աշնան չուում կէրմասիր: Աւազակութիւնը, զողութիւնը, ծուլութիւնը, խորամանկութիւնը, կեղծառորութիւնը սրանց առանձնայատուկ զըծերն են:

Հայերի. — Բացի Բախտիարցիներից և Թօրքերից՝ զաւարի եկուր տարրը կազմում են հայերը, որոնք, ըստ զաւարի կազմութեան կազմութեանը, զաղթել են Հին-Զուլյայի ամառանուն կաւառից (1606 թւին), Շահ-Ալրասի ձեռուով: Նրանց իշխանն է լիուում մէլիք Տէրպարուսուն, որ իր Սուքիսս որգու և զաղթականների հետ գալիս է Զահարմանալ: Իշխանական այս տոնմի ծագման և զործունէութեան մասին, տարաբախտաբար, չունինց որ և է հին, զրական տեղեկութիւն Միայն Յար. Տէր-Յովհաննանցի «Պատմուրին Նոր-Զուլյայուց» յայնի է, որ մէլիքի Սուքիսս որդին քահանայ է ձեռնադրում և հօր մահց յետոյ ինքն է սահաննում ծողովրդի կառավարութեան զործը, որ չարունակում է մինչև իր մահը: Թէ Տէր-Յուրիսի ինչ զործունէութիւն է ցոյց տալիս իր պաշտամանավարութեան ընթացքում, տեղեկութիւններ պահասում են: Մեռնում է նա 1690 թ. Ապրիլ 7ին. մարմինն ամփոփուած է Վաստիկանի հայոց գերեզմանատանը, որ զըծերում է Սօվոր սարի ստորոտին: Հողակոյտի

վրայ գրւած է 18 թիզ երկարութիւն, 5 թիզ լայնութիւն և 7 թիզ բարձրութիւն ունեցող երկնագոյն ընտիր մարմարեայ մի քար, որի վրայ փորագրւած է հետեւալ զամբանագիրը.

ՏԻՍԿԱՆԻ	ԵԼԻ ՀՈՐԻ, ԵԿԻ ՍԵԶԻՄ,	ԳՐԻՍՈՍԻ
ԽԱՆԻ	ԹՈՂՈՄ ԶԱՅԱԲԻ,	ԱՅ
	ԵՐՄԱՆ ԱՌ ՀԱՅՐԻ:	

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ
ՏԵՐ ՈՐԴԻ ՏԱՐԱՎՈՒՄ,
ՈՐ Է ՈՐԴԻ ՏԵՐ-ՊԵՏՐՈՎՈՒ,
ՈՐ ՓՈՒՅՑԱԿ
ԱՇԽԱՐ ՎԵՐԻՆ,
ԹՎ. Ռ. Ճ. Հ. ԹԻՒՆ,
ԱՊՐԻԼ ԱՄՄ 7-ԻՆ:

Տէր - Սուքիսի մահից յետոյ զաւառի իշխանութիւնն անցնում է նրա Արէլ որդուն։ Արա ժամանակ վրանարնակ Լոռեր յաճախակի յարձակում են գիրացիների վրայ, անինայորէն հարսանարում նրանց և մտնեապէս քայլայում։ Արէլն աշխատում է Լոռերի հարստահարութիւններին վերջ տալ, բայց զէնքի և ուզմանիթի պակասութեան պատճառով չի կարողանում դիմադրել։ Ըստ աւանդութեան՝ մի օր Պարսից Նադէր շահը հարկանաւափներ է ուղարկում Զահարմահալի գիրացիներից հարկ հաւաքելու։ Արէլը սաստիկ յուղած դիմում է հարկանաւափներին և գանգատում։ «Եթէ Լոռերն են մեր զաւառի թագաւորը, ինչո՞ւ Նադէր շահը հարկ է պահանջում, իսկ եթէ Նադէրն է շահը, ինչո՞ւ լի պահանջում, մեզ հաստատարում»։ Հարկանաւափները ենելութիւնը պատմում են Նադէրին։ Հահը սաստիկ զայրացած դրօքի գլուխ է անցնում և յարձակում Լոռերի վրայ և նրանց զաւարից դուրս է քչում, ապա վերադառնում է Զահարմահալ։ Քննանթար Արէլը քահանաներով և ժողովրդով շնդառաջ է զալիս և ներկայանալով շահին ասում։ «Ահա ես և քո ուղութեան հպատակ ժողովուրդը, որ տալիս է հարկը»։ Հահը Արէլի համարձակ պատսխանը լսելով՝ նրան զգում է և ազատ արձակում։

Արէլին յաջորդում է նրա Սուքիսի որդին։ Սրբ գործոնէութեան մասին տեղեկութիւններ չկան։ Սուքիսի մահից յետոյ քեալանթարութիւնն անցնում է նրա Ղուկաս որդուն, որ ժողովրդասէր, ազնիւ և քաջ մի գիրացիս է լինում։ Իր ամբողջ կեանքը նորում է ժողովրդին։

և ձեռք քերում լայն ժողովրդականութիւն։ Այդ պատճառով էլ նա ատելի է զանոնում Զահարմահալի ժամանակակից զաւառապես Մահմադ - Ռոզա խանին, որ զաւարութեամբ սպաննում է նրան։ 1834 թւին Ղուկասը ժողովրդի գործով անցնում է Սպահան։ Մահմադի զինւած չորս ձիարքները հետապնդում են նրան և քաղաքի կամրջի վրայ գնդակահարում։ Մարմինն ամփոփում են Նոր-Ջուղայի Ս. Ամենափրկչեան վանքը, որը նրա տապանաքարի վրայ գրւած է հետեւալ անպանցյան ոտանաւորը։

Ի ՆԵՐԻՉՈՅ ԶԱՅՍ ԴԱՄԲԱՐԱՆԻ,
ԱՄՐԱԲԱՆԵԱՆ՝ ՀՈՐԴՈ, ՇԱԼԻՒ,
ԶԻՒ ԶՈՒԿԱՍ՝ ՔԱԼԱՇԹԱՐԻ,
ՈՐԻՆ ՍՈՐԻՔԱՅ՝ ԲԱՐԵՑԱՐՈՒԻ:
ԵՐ ՄԵՐ ԱԶԴԻՆ՝ ՇՈՅՅ ՊԻՏԱՆԻՆ,
ՑԻՍՈՒՆ ԵՒ ՄԻ՝ ԱՄ ՀԱՍԱԿԻ,
ԱՆՄԵՐ ԿՈԼՈՎ՝ ՇԱԾԱՏԱԿԻ,
ՈՐՔ ՀԱԵԴԻՎՈՒՔ՝ ՏՈՒԵ ՊԵՐՈՄԻ,
ԹԻՎԸ ՀԱՅԱԿ ՌԻՒ ՀԱՐԻԿԻ
ԵՐԵՔ ՏԱՄԱՆ ՀԱՅՆ ԱԱՆԻՎ,
ՑԱՄՍՆԵԱՆ ԵՐԵՔ ԴԵԿՏԵՄԲՐԻՆ։

Գեալանթար Ղուկասն ունենում է չորս որդի՝ Յարութիւն, Մարտիրոս, Ցողնաննէս և Ցովակիմ։ Սրանցից Յարութիւնը գանոնում է Լիկանանի քեալանթարը, իսկ Մարտիրոսը՝ Ահմագաբարդի։ Սրանց ժամանակ Լոռերը նորից փորձում են յարձակումներ գործել Զահարմահալի վոյակ և գիրացիներին հարստաներ ու կենեթել։ Քեալանթար Յարութիւնը խոչնորում է հանդիսանում նրանց ձգտութերին։ Նա չորինը իր ճարպիկութեան և քաղաքականութեան ոչխացնում է նրանց ծրագիրները։ Դրա վրայ Լոռերը սաստիկ զայրացած, 1855 թւին, յարձակում են Յարութիւնի վրայ և նրան իր Արէլ հօրեղոր հետ սպանում։ Մահան լուրը տարածում է կայծակի արագութեամբ։ Լիկանանի ժողովուրդը գառնագիրն ողբում է իր սիրելի քեալանթարի կորուսը, իսկ Նոր-Ջուղայի թեմի ժամանակակից թագէու առաջնորդը բողոքում է Պարսից Սակրազամ մեծ նախարարին, կատարած մարդասպանութեան դէմ։ Սազագամը յարգելով առաջնորդի բորբը, զօք է ուղարկում մարդասպան Լոռերի վրայ և նրանց բնակարանները քարութանք անում է։ Անուհետև Լիկանթանի քեալանթար է նշանակում Յարութիւնի Բէզլար որդին։ Սրա օրով ժողո-

վորդն ապրում է խաղաղ պայմանների մէջ։ Այդ գրութիւնը սակայն երկար չի տևում։ Լուսուրդն որից շարունակում են իրենց ասպատակութիւններն ու հարստանարութիւնները։ Նրանք գրաւում են իրենց հօտերի համար կենսափան նշանակութիւն ունեցող բնիկների արոտաեղիներն ու բարձրաւանդակները, որի հետևակող գիւղացիներն օրբստոր զիմում են դէպի տնասական քայլայում։ Դեռ աւելին՝ Լուսուրդ գնում են Զահարմահալի որոշ հոգամասերը և հետզետէ զօրեղացնում իրենց տիրապետութիւնը։ Այսօր արդէն նրանք տէր են ամբողջ Զահարմահալին։

Լուսուրդ գերիշխանութեանն ներքոյ գտնուղ հայ գիւղացիները ցրում են և հաստատում զանազան գիւղերում։ Այնուեւեւ Զահարմահալի քեալանթարութեան պաշտօնը վարում են հետեւել շրոս ազգատոհմերը։

1. Ալուքիսանները – Աշմաղաբաղում.
2. Ղարախաննենները – Ոլրափում.
3. Բարումնանները կամ
Խուդաբախշեանները – Մամուքայում.
4. Ոհանեանները կամ
Դաւութեանները – Գիշնիգանում.

Ցիշեալ ազգատոհմերից իրավանչւրոն ունենում է 4-500-ի շափ ոչխարներ, մոտ 100 եզեր, կովեր, ձիեր, սիկ ամբարները լիքին են լիսում ցորենով, գարով, իւղով, ձէ՛թով, և այլն։ Նրանց տան գոները բաց են լինում ամենին պատշ. օտարական ճանապարհորդները միշտ իշեանում են նրանց տները և հիւրասիրում։ Ասենք մի քանի խօսք նրանց մասին։

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

(Շարումակելի)

Եր. Խ. — Կը նշանակենք Հռո Հեղինակին նախորդ յօդուածին մէջ սպրած հետեւել գրեպակները։

ՎՐԻՊԱԿ

ՈՒՂՂԵԼԻ

Գևոնդումանի մահալ	Գեանդումանի մահալ
Զօլակա	Զօլաշա
Վախտուսար	Վախտուսաթ
Զուռու աղբիւր	Զուռուռ աղբիւր
Սօվոր	Սօվոր սար



ՀՆԱԽՈՍԱԿԱԿՈՒԹԻՒՆԸ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

ՀԻՆ ՀԱՅՈՑ ՓՈՎ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ

(Շար. տես Բազմ. էջ 210)

2. – Յես լուսաւորչի և Տրդատայ մահուան՝ անոնց հիմած զպրոցները չկարողացան ապրիլ։ Տրդատայ յաջորդաց անարժան ընթացքը չպիտի նպաստէր անոնց պահանութեանը, մինչև որ հասաւ մեծին ներսիսի կորովի ու շինարար բազուկը, որ վերստին նորոցեց Հայաստանի խաթարեալ բարեկարգութիւնը, կուտելով թագաւորաց դէմ։ և ուրիշ ձեռնարկութեանց հետ «կարգէր» և ի տեղին տեղին զպրոց յունարէն և ասորերէն՝ յամենայն գաւառս Հայոց։ Այս զպրոցները, նախորդաց ծրագրով, բայց աւելի ժողովրդական հանգամանց ունենալ կը թուին։ որովհետեւ կը գտնուէին բոլոր զաւառաց մէջ, և այս պատճառաւ ալ ցերեկեայ էին անշուշտ։ որոյ համար ներսէս անոնց առանձին ոռնիկ չի յատկացներ, ինչպէս ըրած էր Տրդատ, և ինըն իսկ ներսէս հիւանդանոցաց և աղքատանոցաց։ Զպիտի սիսալինց խորհելով՝ թէ մեծ հայրապետիս մահուանը՝ անոր բոլոր հաստատութեանց ու բարեկարգութեանց հետո՝ վերստին ջընջուեցան զպրոցներն ալ, որոնց ոչ մէկ կարեւորութիւն կրնային ունենալ անոր սպանչին, հեթանոսամիտ ու զեղծարարոյ Պապայ համար։

Փաւատու նկարագրելով այդ շրջանի հայ ժողովրդեան ցըտութիւնն առ Քրիստոնէական կրօնըը, և հեթանոսական բարեկերը՝ որոց ակնարկեցի, կ'ըսէ՛ թէ բացառութիւն կը կազմէին անոնց՝ «որք

1. Փաւ. 75. — 2. Նոյն՝ 228-31.